13. Napier, J.D., Heckman, R.W., & Juenger, T.E. (2023). Gene-by-environment interactions in plants: Molecular mechanisms, environmental drivers, and adaptive plasticity. *The Plant Cell*, 35(1), - pp. 109-124. <https://doi.org/10.1093/plcell/koac322>.
14. Shanina, E.P., Likhodeyevsky, G.A. (2021). Evaluation of interspecific potato breeding material with a complex of genes of immunity to Potato virus Y using molecular markers. *Agronomy Research*, 19(1), - pp. 224-231. <https://doi.org/10.15159/AR.20.235>.
15. Sharma, S.K., Bolser, D., et al. (2013). Construction of Reference Chromosome-Scale Pseudomolecules for Potato: Integrating the Potato Genome with Genetic and Physical Maps. *G3 Genes|Genomes|Genetics*, 3(11), - pp. 2031-2047. <https://doi.org/10.1534/g3.113.007153>.
16. Van Berloo, R., Zhu, A., Ursem, R., Verbakel, H., Gort, G., & van Eeuwijk, F. A. (2008). Diversity and linkage disequilibrium analysis within a selected set of cultivated tomatoes. *Theoretical and Applied Genetics*, 117(1), - pp. 89-101. <https://doi.org/10.1007/s00122-008-0755-x>.
17. Zhang, H., Xu, F., Wu, Y., Hu, H., & Dai, X. (2017). Progress of potato staple food research and industry development in China. *Journal of Integrative Agriculture*, 16(12), - pp. 2924-2932. [https://doi.org/10.1016/S2095-3119\(17\)61736-2](https://doi.org/10.1016/S2095-3119(17)61736-2).

Գենետիկական բազմազանությունը որոշակի սորտերի կարտոֆելի բիոքիմիական և մոլեկուլար մարկերներում

Մանվել Բադալյան, Կատյա Ալոյան, Անդրեաս Մելիկյան
 Գիտական կենտրոնի ագրոբիոտեխնոլոգիայի ՀԱՊԱ

Կարևոր բառեր: *բեկային բանաձև, կարտոֆել, ռեստրիկտազ, ռեստրիկցիոնային ֆրագմենտ ԴՆԿ, սպեկտր էլեկտրոֆորեզ*

Անոտացիա. Ներկայումս ագրոնոմիայի զարգացման մեջ առաջնությունը պատկանում է նոր սորտերի ստեղծմանը, որոնք բնութագրվում են բարձր արտադրողականությամբ և հարմարվածությամբ տարբեր կլիմային պայմաններին: Ներկայումս ագրոնոմիայի զարգացման մեջ առաջնությունը պատկանում է նոր սորտերի ստեղծմանը, որոնք բնութագրվում են բարձր արտադրողականությամբ և հարմարվածությամբ տարբեր կլիմային պայմաններին: Ներկայումս ագրոնոմիայի զարգացման մեջ առաջնությունը պատկանում է նոր սորտերի ստեղծմանը, որոնք բնութագրվում են բարձր արտադրողականությամբ և հարմարվածությամբ տարբեր կլիմային պայմաններին:

Genetic Diversity of Some Potato Varieties per Biochemical and Molecular Markers

Manvel Badalyan, Tatevik Aloyan, Andreas Melikyan

Scientific Center for Agrobiotechnology, ANAU

Keywords: *DNA restriction fragment, electrophoresis spectrum, potato, protein formula, restriction enzyme*

Abstract. As a globally important food crop, the potato ranks fourth in production, following wheat, rice, and maize. Currently, over 7,000 varieties, developed in the 18th and 20th centuries, are cultivated worldwide. At this stage of agricultural development, where the primary challenge is the creation of new crop varieties and the improvement of existing ones to meet growing population and production demands, both classical breeding methods and modern technologies — such as molecular markers and genetic transformation — are employed. This study investigates the intravarietal and intervarietal diversity of three valuable potato varieties cultivated in Armenia. Genetic polymorphism was assessed using protein markers (11S-globulin protein profiles and electrophoretic spectra) and DNA markers (RFLP). The research utilized a combination of classical agronomic, molecular biological, biotechnological, and genetic-mathematical methods. The results revealed that the 11S-globulin proteins in all studied potato varieties exhibit polymorphism, as evidenced by distinct electrophoretic spectra and protein profiles. Additionally, the DNA restriction fragment patterns showed varying lengths within the same variety, indicating significant intravarietal genetic polymorphism. These findings can serve as genetic markers for the identification and passporting of the studied varieties, as well as for marker-assisted selection in breeding programs.

Շահերի հայտարարագիր

Չեղիները հայտարարում են, որ այս հոդվածի հետազոտության, հեղինակության և/կամ հրատարակման հետ կապված շահերի բախում առկա չէ:

*Ընդունվել է՝ 09.08.2024 թ.
Գրախոսվել է՝ 15.08.2024 թ.*



ԱԳՐՈՎԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
Հայաստանի ազգային ագրարային համալսարան
AGRICULTURE AND TECHNOLOGY АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ

Միջազգային գիտական
պարբերական

ISSN 2579-2822



ՀՏԴ 635.34:[632.93:632.6]

doi: 10.52276/25792822-2024.3-239

ԿԱՂԱՄՔԻ ՏԵՐԵՎԱԿԵՐ ՎՆԱՍՏՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԸՍՏ *BACILLUS THURINGIENSIS* ՏԵՍԱԿԻ ԲԱԿՏԵՐԻԱԿԱՆ ՇՏԱՄՆԵՐԻ ՉԱՓԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ

Հրանտ Թերլեմեզյան^{ID} գ.գ.դ., Մասիս Սարգսյան^{ID} Կ.գ.դ., Հարություն Հարությունյան^{ID} գ.գ.թ., Սոնա Սարգսյան^{ID} գ.գ.թ.

Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն

hlt_arm@yahoo.com, masis.arm@gmail.com, harutyun555@gmail.com, sonasargsyan999@gmail.com

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր`

բակտերիական և քիմիական միջատասպաններ, կաղամբի ճերմակաթիթեռի և կաղամբի բվիկի թրթուրներ, կենսաբանական արդյունավետություն, չափագրական ցուցանիշներ, վիճակագրական ցուցանիշներ

ԱՍՓՈՓԱԳԻՐ

Կենսացենոզի առանձին տարրերից մեր կողմից մանրէաբանական եղանակով առանձնացվել է *Bt* տեսակի բակտերիական միջատասպանների երկու շտամ, ուսումնասիրվել են ՄՊԱ սննդամիջավայրի վրա ձևավորված դրանց զաղութների, վեգետատիվ բջիջների, վերջիններիս կողմից ձևավորված սպորների և բյուրեղային մարմնիկների չափագրական ցուցանիշները:

Գիտափորձերով հաստատվել է, որ կաղամբի ճերմակաթիթեռի թրթուրների դեմ պայքարում արդյունավետ է ցածր խտությամբ 300 մլ/ն սպոր/մլ տիտրով *Bt_{Hm}-07* և *Bt_{Ld}-88* կուլտուրային հեղուկների առանձին կիրառումը, իսկ կաղամբի բվիկի դեմ պայքարում *Bt_{Hm}-07* (600 մլ/ն սպոր/մլ տիտրով) + ամպլիգո (0,006 %), *Bt_{Ld}-88* (600 մլ/ն սպոր/մլ տիտրով) + ամպլիգո (0,006 %) միջատասպանների առանձին զուգակցությունները:

Նախաբան

Սպիտակագլուխ կաղամբը (*Brassica deracea convar. capitata L.*) ունի արժեքավոր քիմիական կազմ, մասնավորապես հարուստ է ածխաջրերով, սպիտակուցներով, հանքային աղերով և վիտամիններով, ինչի շնորհիվ դասվում է կարևոր սննդամթերքների շարքին (Թերլեմեզյան և ուրիշ., 2023):

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի հողակլիմայական պայմանները նպաստավոր են սպիտակագլուխ կաղամբի մշակության համար: Սակայն հարկ է նշել, որ այս մշակաբույսի եկամտաբերության բարձրացմանը հաճախ խոչընդոտում են թեփուկաթևների (*Lepidoptera*) կարգին պատկանող կաղամբի ճերմակաթիթեռը (*Pieris brassicae L.*) և կաղամբի բվիկը (*Mamestra brassicae L.*),

որոնց թրթուրների հասցրած վնասի հետևանքով նվազում է բերքատվությունը, ընկնում բերքի որակը: Երբեմն էլ մշակաբույսին հասցված վնասն այնքան մեծ է լինում, որ տնկարկներում վերասածիլավորման անհրաժեշտություն է առաջանում (Ավագյան, 2012):

Ուշագրավ է, որ ֆիտոֆագերի դեմ պայքարի ինտեգրացված համակարգում քիմիական միջատասպանների համեմատ առավել նախընտրելի է բյուրեղային մարմնիկներ սինթեզող *Bacillus thuringiensis (Bt)* տեսակի բակտերիական պատրաստուկների կիրառությունը, որոնք ընկալունակ վնասակար միջատների դեմ կենսաբանական բարձր արդյունավետություն դրսևորելուն զուգընթաց անվտանգ են մարդու, տաքարյուն կենդանիների, էկոհամակարգի և ձկների համար, բացասաբար չեն ազդում մշակաբույսերի աճի և զարգացման վրա, կիրառելի են բուսաճման (վե-

գետացիայի) ցանկացած փուլում (Ավագյան, Սարգսյան, 2012): Սակայն պետք է նշել, որ արտերկրից ներկրվող *Bt* տեսակի բակտերիական պատրաստուկի ինքնարժեքը մի քանի անգամ ավելանում է, ինչը տնտեսապես շահավետ չէ (Chapanyan, Sargsyan, 2018):

Հաշվի առնելով հայրենական պատրաստուկ արտադրելու անհրաժեշտությունը՝ խնդիր է դրվել կենսացենոզում բնականորեն մահացած թրթուրներից մանրէաբանական եղանակով առանձնացնել *Bt* տեսակի բակտերիական շտամներ, բացահայտել ինչպես դրանց, այնպես էլ վերջիններիս կողմից ձևավորած որոշ բաղադրիչների կառուցվածքային և չափագրական առանձնահատկությունները, իսկ բակտերիական շտամների հիման վրա թողարկված կուլտուրային հեղուկները լաբորատոր պայմաններում ու կաղամբի տնկարկներում փորձարկել կաղամբի ճերմակաթիթեռի և կաղամբի բվիկի ցածր հասակի թրթուրների դեմ:

Վնասակար միջատների դեմ բակտերիական միջատասպանների ազդման սպեկտրի վերջնական որոշումը հնարավորություն կտա ընտրել առևտրային պատրաստուկների թողարկման հեռանկարային *Bt* տեսակի բակտերիական շտամներ:

Նյութը և մեթոդները

Գիտափորձերն իրականացվել են 2019-2023 թթ. լաբորատոր պայմաններում և կաղամբի տնկարկներում: Լաբորատոր հետազոտություններն ընդհանուր առմամբ կատարվել են 2019-2021 թվականներին, բաժնյակային և արտադրական փորձերը՝ համապատասխանաբար 2022 (մայիսի 16) և 2023 (մայիսի 22) թվականներին Արմավիրի մարզի Լուկաշին և Խորոնք համայնքների տնկարկներում:

Որպես հետազոտության նյութ են ընտրվել կենսացենոզում բնականորեն մահացած խնձորենու ցեցի (*Hyponomeuta malinellus Zell*) և կոլորադայան բզեզի (*Leptinotarsa desemeleata Say*) թրթուրներից մանրէաբանական եղանակով մեր կողմից առանձնացված *Bt_{im}-07* և *Bt_{id}-88* (անվանումը տրվել է հեղինակների կողմից) միջատասպան բակտերիական շտամները, վերջիններիս հիման վրա առանձին (անջատ) թողարկված կուլտուրային հեղուկները, լեպիդոպիդ առևտրային բակտերիական պատրաստուկը (ԿԱ 3000 ԱՄ/մգ պատրաստուկային փոշում, թողարկող՝ Ռուսաստանի Դաշնության Բերդակի քիմիական գործարան), ամպլիգո քիմիական պատրաստուկը (15 % միկրոկապսուլացված կախույթ, Սինգետա, Շվեյցարիա), կաղամբի ճերմակաթիթեռի II-III և կաղամբի բվիկի I-II հասակի թրթուրները, սպիտակագլուխ կաղամբի Իռնա սորոը (Բույսերի սորտերի պահպանության պետական գրանցամատյան, 2022), ինչպես նաև բակտերիական միջատասպանների կողմից ձևավորված գաղութները, Էնդոսպորներն ու բյուրեղային մարմնիկները:

Հարկ է նշել, որ առևտրային պատրաստուկները ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կող-

մից թույլատրվել են Հայաստանում օգտագործել ֆիտոֆագերի դեմ (<https://snund.am>):

Բնական մահով մահացած թրթուրներից *Bt* տեսակի միջատասպան շտամների մանրէաբանական եղանակով առանձնացման մեթոդը մանրամասն ներկայացված է մեր Նախորդ հոդվածում (Թերլեմեզյան և ուրիշ., 2022):

Միջատասպան բակտերիական վեգետատիվ բջիջների, Էնդոսպորների (սպորների), ձևավորված միջատասպան բյուրեղային մարմնիկների չափագրումը, ինչպես նաև բյուրեղ առաջացնող բակտերիաների փոխցանաբերող պահպանությունը մասպեպտոնային ազար սննդամիջավայրի վրա կատարվել են ըստ մեթոդական ձեռնարկների (Нетрусов и др., 2005, Թռչունյան և ուրիշ., 2014):

Սապեպտոնային ազար (ՄՊԱ) և օսլամոնիակային ազար (ՕԱԱ) սննդամիջավայրերի վրա բակտերիական միջատասպանների ձևավորած գաղութների տրամագծերը չափվել են քանոնով: Առանձնացված միջատասպան բյուրեղ առաջացնող բակտերիաների հիման վրա *Biof Fermenter*, *Flexem Labfreez* մակնիշի խմորիչում (ֆերմենտորում) աճի նպաստավոր պայմաններում (ՄՊԱ սննդամիջավայրում, ջերմաստիճանը՝ 28-30°) ինկուբացիայից 3-4 օր հետո թողարկվել են կուլտուրային հեղուկներ: Վերջիններիս տիտրերը որոշվել են «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում:

Գիտափորձերում ներառված միջատասպանները կաղամբի ճերմակաթիթեռի և կաղամբի բվիկի ցածր հասակի թրթուրների դեմ փորձարկվել են լաբորատոր պայմաններում և կաղամբի տնկարկներում (բաժնյակային և արտադրական փորձեր):

Որպես փորձատեղամաս ընտրվել են Արմավիրի մարզի կաղամբով զբաղեցված այն տնկարկները, որտեղ ֆիտոֆագերի (կաղամբի ճերմակաթիթեռ, կաղամբի բվիկ) թրթուրների բնակը չի գերազանցել նշված վնասատուների տնտեսական վնասակարության շեմը (Экономические пороги вредоносности вредителей, болезней и сорных растений в посевах сельскохозяйственных культур, 2016):

Լաբորատոր և բաժնյակային (փոքրածավալ) փորձերը կատարվել են 5-ական, արտադրական (մեծածավալ) փորձերը՝ 10-ական կրկնողությամբ:

Բաժնյակային փորձերի առանձին տարբերակների համար հատկացված տնկարկային մակերեսը կազմել է 100 մ² (աշխատանքային հեղուկի ծախսը՝ 5 լ/100 մ²), արտադրական փորձերինը՝ 0,2 հա: Կաղամբի տնկարկներում ցողումները կատարվել են RTR MAX մակնիշի շարժիչային սրսկիչով: Աշխատանքային հեղուկի ծախսը կազմել է 500 լ/հա:

Առանձին և զուգակցված կիրառմամբ բակտերիական միջատասպանների կենսաբանական արդյունավետությունը որոշվել է ցողումից 3, 7 և 10 օր անց՝ Աբբոտի բանաձևով (Ավագյան, 2012):

Գիտափորձերի ընթացքում գրանցված կենսաբանական արդյունավետության ցուցանիշները ենթարկվել են վիճակագրական վերլուծության (Kazarян, 2007):

Արդյունքները և վերլուծությունը

Լաբորատոր հետազոտություններով հաստատվել է, որ կենսացենոզից մեր կողմից մանրէաբանական եղանակով առանձնացված Bt_{Hm-07} և Bt_{Ld-88} բակտերիական միջատասպանները տարբեր տիպի պիտո սննդամիջավայրերի վրա (ՄՊԱ, ՕԱԱ, Չապեկ) աճելիս ձևավորել են տարբեր տրամաչափի գաղութներ. խոշոր տրամաչափի գաղութներ ձևավորվել են ՄՊԱ-ի վրա (միջինը՝ համապատասխանաբար 11,8 և 10,2 մմ): ՕԱԱ և Չապեկ սննդամիջավայրերի դեպքում նշված ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 6,8 և 6,2, 8,6 և 7,9 մմ:

Ուշագրավ է, որ Bt_{Hm-07} շտամի ձևավորած գաղութները կլորավուն են, կրեմագույն և փայլատ, եզրերը՝ ներփքված, թույլ ուռուցիկ կողապատկերով (պրոֆիլով): Bt_{Ld-88} -ի գաղութները բաց կրեմագույն են, եզրերը՝ առավել արտահայտիչ ներփքված:

Bt_{Hm-07} և Bt_{Ld-88} շտամների ուսումնասիրություններով պարզվել է, որ ձողիկաձև վեգետատիվ բջիջների, դրանցում ձևավորված սպորների և վնասակար միջատների համար թունավոր բյուրեղային մարմնիկների երկայնական ու լայնական միջին չափերը ևս ՄՊԱ, ՕԱԱ և Չապեկ սննդամիջավայրերում ենթարկվել են փոփոխության: Այսպես՝ նշված շտամների վեգետատիվ բջիջների երկայնական և լայնական միջին չափերը ՄՊԱ սննդամիջավայրի վրա աճելիս ընդհանուր առմամբ տատանվել են համապատասխանաբար 3,52 և 4,46 x 1,16 և 1,52 մկմ սահմաններում՝ գերազանցելով ՕԱԱ (2,47 և 2,70 x 1,12 և 1,38 մկմ) և Չապեկ (2,93 և 3,86 x 1,14 և 1,44 մկմ) սննդամիջավայրերում արձանագրված նույնանուն ցուցանիշները (աղ. 1):

Չարկ է նշել, որ նշված սննդամիջավայրերում նկատվել է նաև օվալաձև սպորների և շեղանկյունաձև բյուրեղային մարմնիկների չափերի փոփոխություն, ինչը, ըստ երևույթին, պայմանավորված է սննդամիջավայրերի բաղադրությունների տարբերությամբ և շտամների առանձնահատկությամբ:

2021 թվականին 100-800 (100, 150, 200, 250, 300, 800) մլն սպոր/մլ տիտրով կուլտուրային հեղուկները լաբորատոր պայմաններում առանձին փորձարկվել են կաղամբի ճերմակաթիթեռի և կաղամբի բվիկի թրթուրների դեմ: Արդյունքում հաստատվել է, որ կաղամբի ճերմակաթիթեռի II-III հասակի թրթուրների դեմ առավել արդյունավետ է ցածր խտությամբ՝ 300 մլն սպոր/մլ տիտրով կուլտուրային հեղուկը, կաղամբի բվիկի I-II հասակի թրթուրների դեմ 600 մլն սպոր/մլ տիտրով կուլտուրային հեղուկը, երբ զուգակցվել է ամպլիգո քիմիական պատրաստուկի՝ ջրով 10 անգամ նոսրացված 0,006 %-անոց ենթամահացու (սուբլետալ) կախույթի հետ (ֆիտոֆագերի դեմ դրսևորված կենսաբանական արդյունավետության ցուցանիշն ընդհանուր առմամբ տատանվել է 95,2-96,4 % սահմանում):

Չիմք ընդունելով լաբորատոր պայմաններում գրանցված կենսաբանական արդյունավետության բարձր ցուցանիշները՝ Bt տեսակի բակտերիական կուլտուրային հեղուկներն առանձին և ամպլիգո քիմիական պատրաստուկի ենթամահացու խտության հետ զուգակցված փորձարկվել են կաղամբի տնկարկներում՝ կաղամբի վնասատուների դեմ պայթարի նպատակով (բաժնյակային և արտադրական փորձեր):

Աղյուսակ 1. Տարբեր սննդամիջավայրերում տեղական բակտերիական միջատասպանների շտամների վեգետատիվ բջիջների, սպորների և Էնդոթույն բյուրեղային մարմնիկների երկայնական ու լայնական միջին չափերը (մկմ)*

Շտամներ	Վեգետատիվ բջիջներ		Սպորներ		Բյուրեղային մարմնիկներ	
	երկարությունը	լայնությունը	երկարությունը	լայնությունը	երկարությունը	լայնությունը
ՄՊԱ						
Bt_{Hm-07}	3,52	1,16	1,55	0,80	1,48	1,00
Bt_{Ld-88}	4,46	1,52	1,82	0,96	1,67	1,25
ՕԱԱ						
Bt_{Hm-07}	2,47	1,12	1,16	0,71	0,95	0,80
Bt_{Ld-88}	2,70	1,38	1,69	0,83	1,22	1,13
Չապեկ						
Bt_{Hm-07}	2,93	1,14	1,29	0,59	1,30	0,94
Bt_{Ld-88}	3,86	1,44	1,53	0,78	1,50	1,17

*Կազմվել է հեղինակների կողմից:

Աղյուսակ 2. Առանձին և համակցված կիրառմամբ միջատասպանների կենսաբանական արդյունավետությունը կաղամբի տերևակեր վնասատուների դեմ պայթարում (Լուկաշին, բաժնյակային փորձեր, 2022 թ.)*

Տարբերակներ	Կուլտուրային հեղուկի (մլն սպոր/մլ) և առևտրային պատրաստուկների (%) խտությունները	Կենսաբանական արդյունավետությունն ըստ հաշվառման օրերի, %		
		3	7	10
Կաղամբի ճերմակաթիթեռի II-III հասակի թրթուրներ				
<i>Bt_{Hm}</i> -07	300	52,6	81,7	93,5
<i>Bt_{Ld}</i> -88	300	47,8	87,4	92,8
Լեպիդոցիդ (չափանմուշ)	0,2	58,3	89,2	94,0
Կաղամբի բվիկի I-II հասակի թրթուրներ				
<i>Bt_{Hm}</i> -07 + ամպլիզո	600+0,006	48,4	79,5	92,9
<i>Bt_{Ld}</i> -88 + ամպլիզո	600+0,006	50,7	80,6	93,7
Ամպլիզո (չափանմուշ)	0,06	82,9	93,2	95,1

Աղյուսակ 3. Առանձին և համակցված կիրառմամբ միջատասպանների կենսաբանական արդյունավետությունը կաղամբի տերևակեր վնասատուների դեմ (Նորոնք, արտադրական փորձեր, 2023 թ.)*

Տարբերակներ	Կուլտուրային հեղուկի (մլն սպոր/մլ) և առևտրային պատրաստուկների (%) խտությունները	Կենսաբանական արդյունավետությունն ըստ հաշվառման օրերի, %		
		3	7	10
Կաղամբի ճերմակաթիթեռի II-III հասակի թրթուրներ				
<i>Bt_{Hm}</i> -07	300	50,1	80,2	92,8
<i>Bt_{Ld}</i> -88	300	46,4	84,7	91,7
Լեպիդոցիդ (չափանմուշ)	0,2	56,9	88,0	93,3
Կաղամբի բվիկի I-II հասակի թրթուրներ				
<i>Bt_{Hm}</i> -07+ ամպլիզո	600+0,006	48,0	77,5	91,6
<i>Bt_{Ld}</i> -88+ ամպլիզո	60+0,006	49,2	79,4	92,9
Ամպլիզո (չափանմուշ)	0,06	81,6	93,0	94,0

*Կազմվել է հեղինակների կողմից:

Մինչ գիտափորձերը՝ նախնական հետազոտությամբ պարզվել է, որ փորձատեղամասերում կաղամբի տերևաթիթեռի ձևավորման փուլում տնկարկների 11-17 %-ը բնակեցված է եղել կաղամբի ճերմակաթիթեռի թրթուրներով (վնասատուների խմբերում առանձնյակների բնակը կազմել է 8-26 հատ), իսկ կաղամբի գլխի ձևավորման փուլում հայտնաբերվել է կաղամբի բվիկի 1-3 թրթուր, այսինքն՝ բնակեցված է եղել տնկարկների 16-20 %-ը: Գրանցված տվյալները համեմատվել են վնասատուների

տնտեսական վնասակարության շեմի հետ, ինչի հիման վրա փորձատեղամասերում իրականացվել են միջատասպանների փորձարկումներ:

Ըստ աղյուսակ 2-ի՝ 2022 թվականին իրականացված բաժնյակային փորձերում *Bt_{Hm}*-07 և *Bt_{Ld}*-88 բակտերիական միջատասպանների 300 մլն սպոր/մլ տիտրով կուլտուրային հեղուկների կենսաբանական առավելագույն արդյունավետություն գրանցվել է կաղամբի ճերմակաթիթեռի II-III հասակի թրթուրների դեմ ցողումից 10 օր անց՝

համապատասխանաբար 93,5 և 92,8 %, իսկ չափանմուշային լեպիդոցիդինը կազմել է 94,0 %:

Կաղամբի բվիկի I-II հասակի թրթուրների դեմ Bt_{Hm-07} և Bt_{Ld-88} բակտերիական միջատասպանների 600 մլն սպոր/մլ տիտրով կուլտուրային հեղուկների և ամպլիգո քիմիական պատրաստուկի ենթամահացու (0,006 %) կախույթի առանձին զուգակցություններով ցողումից 10 օր անց ևս դիտարկվել է բարձր՝ համապատասխանաբար 92,9 և 93,7 % կենսաբանական արդյունավետություն. չափանմուշային ամպլիգոյինը կազմել է 95,1 %: Նշված ցուցանիշները պահպանվել են մինչև ֆիտոֆագերի հարսնյակավորումը:

Ցողման 10-րդ օրվա համեմատությամբ ցողումից 3 և 7 օր անց կենսաբանական արդյունավետությունը եղել է ցածր, ինչը պայմանավորված է բակտերիական միջատասպանների ազդման մեխանիզմի առանձնահատկությամբ:

Հիմք ընդունելով բաժնյակային փորձերում գրանցված կենսաբանական բարձր արդյունավետությունը՝ բակտերիական միջատասպաններն առանձին (կաղամբի ճերմակաթիթեռնի դեմ պայթարում) և ամպլիգո քիմիական պատրաստուկի տուբլետալ խտության հետ զուգակցված (կաղամբի բվիկի դեմ պայթարում) փորձարկվել են նաև արտադրության պայմաններում (աղ. 3):

Աղյուսակ 3-ի համաձայն՝ բաժնյակային փորձերում կաղամբի տերևակեր վնասատուների դեմ միջատասպանների կենսաբանական արդյունավետությունը, ըստ հաշվառման օրերի, պահպանվել է նաև արտադրական փորձերում. կաղամբի ճերմակաթիթեռնի դեմ պայթարի փորձնական տարբերակներում Bt_{Hm-07} և Bt_{Ld-88} բակտերիական միջատասպանները ցողումից 10 օր անց դրսևորել են համապատասխանաբար 92,8 և 91,7 % կենսաբանական արդյունավետություն: Կաղամբի բվիկի դեմ պայթարում փորձնական Bt_{Hm-07} + ամպլիգո և Bt_{Ld-88} + ամպլիգո զուգակցությունները նույն ժամկետում ապահովել են համապատասխանաբար 91,6 և 92,9 % կենսաբանական արդյունավետություն, իսկ լեպիդոցիդ և ամպլիգո չափանմուշային առանձին տարբերակներում դիտարկման նույն ժամկետում կենսաբանական արդյունավետությունը կազմել է՝ համապատասխանաբար 93,3 և 94,0 %:

Մանրէաբանական հետազոտությամբ պարզվել է, որ փորձնական տարբերակների մահացած թրթուրների քայքայված հյուսվածքները հագեցած են եղել Bt տեսակի բակտերիական միջատասպաններով (վեգետատիվ բջիջներով, ձևավորված սպոր-բյուրեղային բաղադրամասերով), ինչը փաստում է, որ թրթուրների մահացությունը պայմանավորված է միջատասպան բակտերիաների ազդեցությամբ:

Վիճակագրական վերլուծությամբ հաստատվել է, որ $P_{0,95}$ և $n=10$ դեպքում Սոյուդենտի $t_{չափանմուշ}$ -ի հաշվարկային 0,896-1,935 ցուցանիշները փոքր են Սոյուդենտի $t_{չափանմուշ}$ -ի աղյու-

սակային 2,23 ցուցից, ինչը փաստում է, որ փորձնական և չափանմուշային տարբերակներում ցողման 10-րդ օրը գրանցված կենսաբանական արդյունավետության ցուցանիշների միջև գոյություն չունի հավաստի տարբերություն:

Փորձի սխալի (P) ցուցանիշների և տատանման գործակցի (V) համապատասխանաբար 2,8-4,9 և 7,36-12,87 % սահմաններում տատանումը հաստատում է, որ գիտափորձերի արդյունքները ստույգ են:

Եզրակացություն

Կենսացենոզի առանձին տարրերից մեր կողմից մանրէաբանական եղանակով առանձնացված Bt տեսակի բակտերիական միջատասպանների երկու շտամները միմյանցից տարբերվում են ՄՊԱ սննդամիջավայրի վրա ձևավորված գաղութների, վեգետատիվ բջիջների, վերջիններիս կողմից ձևավորված սպորների և միջատների համար թունավոր բյուրեղային մարմնիկների չափագրական ցուցանիշներով:

Գիտափորձերով (լաբորատոր, բաժնյակային և արտադրական) հաստատվել է, որ կաղամբի ճերմակաթիթեռնի թրթուրների դեմ պայթարում արդյունավետ է ցածր խտությամբ 300 մլն սպոր/մլ տիտրով Bt_{Hm-07} և Bt_{Ld-88} կուլտուրային հեղուկների առանձին կիրառումը, իսկ կաղամբի բվիկի դեմ պայթարում Bt_{Hm-07} (600 մլն սպոր/մլ տիտրով) + ամպլիգո (0,006 %), Bt_{Ld-88} (600 մլն սպոր/մլ տիտրով) + ամպլիգո (0,006 %) միջատասպանների առանձին զուգակցությունները:

Վիճակագրական վերլուծությամբ հիմնավորվել է, որ փորձնական և չափանմուշային տարբերակների կենսաբանական արդյունավետության ցուցանիշները ստույգ են: Միաժամանակ փորձի սխալի ցուցանիշների և տատանման գործակցի տատանումներով հաստատվել է գիտափորձերի արդյունքների հավաստիությունը:

Գրականություն

1. Ավագյան Ա.Ս. Կաղամբի տերևակեր գլխավոր վնասատուների դեմ էկոլոգիական սկզբունքով պայթարի մշակում Լոռու մարզի պայմաններում: Առենախոս... կենս. գիտ. թեկն. - Եր., 2012. - Էջ 37:
2. Ավագյան Ա.Ս., Սարգսյան Ս.Ա. Բակտերիական միջատասպանների փորձարկումը կաղամբի տերևակեր վնասատուների դեմ արտադրության պայմաններում // Հայաստանի կենսաբանական հանդես. - 2012. - N 2 (64). - Էջ 25-29:
3. Թերլեմեզյան Հ.Լ. և ուրիշ. Բակտերիական և քիմիական միջատասպանների փորձարկումներ լեռնային օղակավոր մետաքսագործի թրթուրների դեմ // Հայաստանի կենսաբանական հանդես. - 2022. - Հ. LXXIV. - N 3. - Էջ 14-19:

4. Թերլեմեզյան Յ.Լ. և ուրիշ. Կաղամբի ցեցի թրթուրների դեմ պայթարի միջոցառումների մշակում Արմավիրի մարզի պայմաններում // Ագրոգիտություն և տեխնոլոգիա. - Եր., 2023. - N 3. - Էջ 252. <https://doi.org/10.52276/25792822-2023.3-252>.
5. Թռչունյան Ա.Յ. և ուրիշ. Մանրէաբանության լաբորատոր աշխատանքներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ. - Եր., 2014. - Էջ 95-169. <http://publishing.yasu.am/en/1425670630>.
6. ՀՀ ԷՆ Բույսերի սորտերի պահպանության պետական գրանցամատյան. - Եր., 2022. - N 15. - Էջ 26:
7. Казарян Н.П. Влияние энтомопатогенов вида *Bacillus thuringiensis* на биологическую активность почв яблоневых садов Арагацотнской области. Дисс. ... канд. биол наук. - Ер., 2007. - С. 33-37.
8. Нетрусов А.И., Егорова М.А., Захарчук Л.М. Практикум по микробиологии. Учебное пособие для студ. высш. учеб. заведений. - М., 2005. - 608 с.
9. Экономические пороги вредоносности вредителей, болезней и сорных растений в посевах сельскохозяйственных культур. Справочник. - М., 2016. - 76 с.
10. Chapanyan, E., Sargsyan, M. (2018). The biological efficiency of the local bacterial insecticide of *Bacillus thuringiensis* species against the caterpillars of the brown - tail moth // Bulletin of the National Agrarian University of Armenia, - N 3, - pp. 5-8.
11. <https://snund.am/hy/page/permitted-chemical-and-biological-plant-protection-products/128>. Բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական թույլատրված միջոցներ: Անվանացանկ Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պետսիցիդների և ագրոքիմիկատների (դիտվել է՝ 17.06.24 թ.):

Разработка мероприятий по борьбе с листогрызущими вредителями капусты на основе метрических показателей штаммов бактерий вида *Bacillus thuringiensis*

Грант Терлемезян, Масис Саркисян, Арутюн Арутюнян, Сона Саркисян

Научный центр оценки и анализа рисков в области безопасности пищевой продукции

Ключевые слова: бактериальные и химические инсектициды, биологическая эффективность, гусеницы капустной белянки и капустной совки, метрические показатели, статистические показатели

Аннотация. Из отдельных компонентов биоценоза микробиологическим способом выделены два штамма бактериальных инсектицидов вида *Bt* и изучены метрические показатели их вегетативных клеток, эндоспор, кристаллов, бактериальных колоний, сформированных на питательной среде МПА. Научными экспериментами подтверждено, что в борьбе с гусеницами капустной белянки эффективно раздельное использование культуральных жидкостей *Bt_{Нм}-07* и *Bt_{Լժ}-88* с титром 300 млн спор/мл, а против капустной совки – сочетания инсектицидов *Bt_{Нм}-07* с титром 600 млн спор/мл + Амплиго (0.006 %), *Bt_{Լժ}-88* с титром 600 млн спор/мл + Амплиго (0.006 %).

Development of Measures of Combating Cabbage Leaf-Eating Pests according to Measurement Parameters of Bacterial Strains of the Species *Bacillus Thuringiensis*

Hrant Terlemezyan, Masis Sargsyan, Harutyun Harutyunyan, Sona Sargsyan

Research Centre for Risk Assessment and Analysis in Food Safety Area

Keywords: bacterial and chemical insecticides, biological efficiency, caterpillars of cabbage white butterfly and cabbage scoops, measurement parameters, statistical indicators

Abstract. In 2019-2023, two insecticidal strains of the *Bt* species were microbiologically isolated from individual components of the biocenosis, and measured values of their vegetative cells, endospores, insecticidal crystallophores, and bacterial colonies formed on a nutrient medium of MPA were revealed. Culture fluids *Bt_{Нм}-07* and *Bt_{Լժ}-88* were tested on cabbage plantings separately with a titer of 300 million spores/ml against caterpillars of the II - III ages of cabbage

white butterfly, and combinations of culture fluids (titer of 600 million spores/ml) + sub-lethal concentration of ampligo (0.006 %) – against caterpillars of the I - II ages of cabbage scoops were investigated. High biological efficiency was noted in the tested variants. Microbiological examination confirmed that the decomposed tissues of the dead larvae in the experimental versions were saturated (full) with *Bt* bacterial insecticides (vegetative cells, also formed by spore-crystal components), the presence of which confirmed that the mortality of the larvae was the result of the effect of the insecticidal bacteria. Statistical analysis confirmed that there is no credible difference between the biological efficiency indicators shown in the experimental and standard versions. The experimental error and coefficient of variation indicators confirm that the results of scientific experiments are accurate.

Շահերի հայտարարագիր

Ֆեդինսկները հայտարարում են, որ այս հոդվածի հետազոտության, հեղինակության և/կամ հրատարակման հետ կապված շահերի բախում առկա չէ:

*Ընդունվել է՝ 20.06.2024 թ.
Գրախոսվել է՝ 02.07.2024 թ.*

	<p>ԱԳՐՈՂԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ Հայաստանի ազգային ագրարային համալսարան AGRISCIENCE AND TECHNOLOGY АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ</p>	<p>Միջազգային գիտական պարբերական ISSN 2579-2822</p>	
---	--	--	---

ՀՏԴ 631.95(479.25)

doi: 10.52276/25792822-2024.3-246

ՏԱՎՈՒՇԻ ՋՐԱՄԲԱՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Անժելա Մկրտչյան ¹ Կ.Գ.Թ., Լուսինե Երիցյան ² Գ.Գ.Թ.

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

a.l.m.2012@mail.ru, lusineyeritsyan1969@gmail.com

Տ Ե Ղ Ե Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Բանալի բառեր՝

Էկոլոգիական գնահատում,
 ծանր մետաղներ,
 ջրերի աղտոտվածություն,
 Տավուշի ջրամբար,
 ֆիզիկաքիմիական ցուցանիշներ

Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Ուսումնասիրվել են Տավուշի ջրամբարի Էկոլոգիական վիճակը, ջրերի քիմիական կազմը, ծանր մետաղներով և նիտրատներով աղտոտվածությունը: Որոշվել է ոռոգման համար ջրերի պիտանելիությունը: Հետազոտությունների համաձայն՝ մարտ և հունիս ամիսներին ջրամբարում պղնձի պարունակությունը համապատասխանաբար կազմել է 0,085 և 0,094 մգ/լ, ցինկինը՝ 0,801 և 0,814 մգ/լ, կապարինը՝ 0,03 և 0,05 մգ/լ, նիտրատներինը՝ 9,5 և 11,4 մգ/լ: Ըստ Էկոլոգիական նորմերի՝ պղնձի և կապարի պարունակությունը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), ցինկինը և նիտրատներինը՝ «վատ» (5-րդ դաս), ինչը մտահոգության տեղիք է տալիս, քանի որ նման ջրերը չի կարելի օգտագործել ոռոգման նպատակով:

Նախաբան

Երկրագնդի գլոբալ տաքացման ներկա պայմաններում յուրաքանչյուր երկրի համար խիստ կարևոր են ջրային ռեսուրսների պահպանումը և արդյունավետ օգտագործումը: Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսները պակաս լինելուց բացի տեղաբաշխված են անհավասարաչափ, ուստի մեծ թվով գյուղատնտեսական ցանքատարածություններ ոռոգվում են անբավարար քանակությամբ կամ չեն ոռոգվում: Արդյունքում նման տարածքներից ստացվում է ցածր բերք:

Հայաստանում լեռնային գետերի հոսքը կարգավորելու, հալոցքաջրերն ու անձրևաջրերը ոռոգման նպատակով կուտակելու, չորային միկրոկլիմայական պայմանները մեղմելու և այլ նպատակներով կառուցվում են ջրամբարներ: Ուշագրավ է, որ հանրապետության տարածքում գործում է շուրջ 80 ջրամբար՝ Տավուշի, Ապարանի, Կեչուտի, Մանթաշի և այլն, որոնք հիմնականում ծառայում են ոռոգման

և էներգետիկայի զարգացման համար (Հայրապետյան և ուրիշ., 2005, Հայրապետյան, Շիրինյան, 2003, Գալստյան, Մկրտչյան, 2013):

Տավուշի ջրամբարը գտնվում է Հայաստանի հյուսիսարևելյան մասում (Տավուշի մարզ), Տավուշ գետի միջին հոսանքում, Բերդ քաղաքից 5 կմ հյուսիս-արևելք (նկ.): Այն արհեստական լիճ է, շահագործման է հանձնվել 1975 թվականին: Ջրամբարի մակերեսը 401,3 հազ. մ² է, ընդհանուր ծավալը՝ 5,23 մլն մ³, օգտակարը՝ 4,73 մլն մ³, երկարությունը՝ 1,9 կմ, առավելագույն լայնությունը՝ 360 մ: Պատվարը հողային է, ունի 360 մ երկարություն, կատարային մասում լայնությունը կազմում է 8 մ: Տարեկան բաց է թողնվում 4,5 մլն մ³ ջուր: Ջրիան կայաններով ջրամբարի ջուրը բարձրացվում և ոռոգման նպատակով հասցվում է Ներքին Կարմիրաղբյուր, Վերին Կարմիրաղբյուր, Մոսեսգեղ և այլ գյուղեր (Հայկական սովետական հանրապետության, 1985, Восстановление Тавушской плотины, 2002):



Նկ. Տավուշի ջրամբարի բարտեզը (www.wikimapia.org):

Հանրապետության որոշ ջրամբարներ աղտոտված են, երբեմն դրանց մեջ թափանցող վնասակար նյութերի քանակությունը հասնում է այնպիսի ծավալների, որ էական վտանգ է ներկայացնում բնական էկոհամակարգերի, բնակչության առողջության համար, ինչպես նաև նպաստում է հողերի դեգրադացմանը:

Ջրամբարների ջրերի աղտոտումն առաջացնում է ֆիզիկական, քիմիական, կենսաբանական հատկությունների փոփոխություններ. նվազում է ջրում լուծելի թթվածնի պարունակությունը, փոխվում են օրգանական նյութերի տարրալուծման պայմանները, ավելանում է ազոտի, ֆոսֆորի, ծանր մետաղների, թունաքիմիկատների խտությունը և այլն, որոնք հանգեցնում են ջրի որակի վատթարացման:

Ջրամբարների աղտոտված ջրերով ոռոգումը կարող է առաջացնել նաև հողի որակական ու քանակական կազմի փոփոխություններ, բացասական ազդեցություն գործել մշակաբույսերի բերքի քանակի և որակի վրա: Հարկ է նշել, որ աղտոտված ջրերի բացասական ազդեցությունը բնական էկոհամակարգերի վրա պայմանավորված է առաջին հերթին բնապահպանական նորմերի խախտումներով (Հարությունյան, Սարգսյան, 2018, Հայրապետյան, Շիրինյան, 2003, Ягодин и др., 1989, Hunanyan, et al., 2020):

Նյութը և մեթոդները

Հետազոտություններն իրականացվել են 2024 թվականին: Խնդիր է դրվել ուսումնասիրել Տավուշի ջրամբարի ջրերի

էկոլոգիական վիճակը և ոռոգման համար պիտանելիությունը, ինչպես նաև այդ ջրերով տևական ժամանակ ոռոգված հողերի ագրոֆիզիկական և ագրոքիմիական հատկությունները: Ջրամբարի ջրերի աղտոտվածությունը որոշելու և էկոլոգիական վիճակը գնահատելու համար նմուշառումը կատարվել է մարտ և հունիս ամիսներին: Ջրային նմուշները տեղափոխվել են ՀԱԱՀ Օրգանական գյուղատնտեսության լաբորատորիա, որտեղ և որոշվել է ջրի՝ ոռոգման նպատակով օգտագործելու պիտանելիությունը: Բոլոր անալիզները կատարվել են ժամանակակից սարքավորումներով («DR 3900») և ընդունված մեթոդներով:

Ընդհանուր առմամբ ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական միջև 45 ինդիկատորային ցուցանիշներով, այդ թվում՝ հիմնական անիոնների և կատիոնների, ծանր մետաղների, առաջնային օրգանական աղտոտիչների որոշմամբ: Մեր կողմից վերցված ջրային նմուշներում որոշվել են կալցիումի, մագնեզիումի, նատրիումի, քլորի, սուլֆատի, կարբոնատի, հիդրոկարբոնատի, նիտրատի իոնները, ծանր մետաղները (*Cu, Zn, Pb*), *pH*-ը, լուծված աղերի պարունակությունը:

Հարկ է նշել, որ ջրերի որակն ըստ վտանգավորության ցուցանիշների գնահատելիս հաշվի է առնվում հատկապես ծանր մետաղների պարունակությունը. կիրառվում են ՖԱՕ-ի կողմից ընդունված սահմանային թույլատրելի խտությունների (*ՄԹԽ*) մոտավոր նորմաները (Հարությունյան, 2010) (աղ. 1): Նշված քանակությունները չպետք է վնաս հասցնեն ոչ բույսերին, ոչ էլ հողում բնակվող կենդանի օրգանիզմներին:

Աղյուսակ 1. Ոռոգման ջրերում ծանր մետաղների (*Cu, Zn, Pb*) ՍԹԽ-ներն ըստ ՖԱՕ-ի տվյալների (Վ.Ա. Չերնիկով, Ա.Ի. Չեկերես, 2004)*

Ծանր մետաղներ	Բոլոր հողերի համար, մգ/լ	Ծանր մեխանիկական կազմ և pH=6,0-8,5 ունեցող հողերի (մինչև 20 տարի օգտագործման) համար, մգ/լ
<i>Cu</i>	0,2	5,0
<i>Zn</i>	2,0	10,0
<i>Pb</i>	5,0	10,0

*Վ. Հարությունյան, 2010:

Գոյություն ունեն սահմանափակ և այլ տրոփոսիվներ: Օրինակ, ըստ Բ.Ա. Յագոդինի, *Cu*-ի ՍԹԽ-ն ոռոգման ջրերում կազմում է 0,20 (մՄՆ) մգ/լ, իսկ *Pb*-ինը՝ 0,1 (ԳԴՀ) մգ/լ (Ягодин и др., 1989):

Ջրի որակի գնահատումը (աղ. 2) կատարվել է նաև ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերի մասին ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի N 75-Ն որոշման համաձայն (www.arlis.am):

Ջրային ռեսուրսների պահպանումն աղտոտումից կարգավորվում է ըստ ջրամբարների սանիտարական պաշտպանության պահանջների: Ջրամբարների սանիտարական պաշտպանությունը կազմակերպական, տեխնիկական, սանիտարատեխնիկական և այլ միջոցառումների համալիր է, որը կանխում է ջրամբարների՝ գյուղատնտեսական, արդյունաբերական և այլ տեսակի աղտոտումները:

Արդյունաբերության ինտենսիվ զարգացումը, գյուղատնտեսության քիմիացումը, լեռնաքիմիական և արդյունաբերական այլ ձեռնարկությունների աղտոտված (հատկապես ծանր մետաղներով) ջրերով հողերի ոռոգումը հանգեցնում է վերջիններիս աղտոտման, ինչը ներկայումս

էկոհամակարգերի վրա մարդու տնտեսական ներգործության առավել տարածված հետևանքներից է: Ծանր մետաղների շարքին են դասվում 50 միավորից բարձր ատոմական կշիռ (5 գ/սմ³-ից բարձր խտություն) ունեցող տարրերը՝ ցինկը, պղինձը, կապարը և այլն:

Հայաստանում հողերը հիմնականում աղտոտված են ծանր մետաղներով, հատկապես *Cu, Zn, Pb, Cd, Co, Ni, Mn*-ով: Կուտակվելով հողում՝ այդ մետաղները տեղաշարժվում են, անցնում բնական ջրերի մեջ, ապա, յուրացվելով բույսերի կողմից, ներթափանցում սննդային շղթա և մարդու մոտ առաջացնում առողջական շեղումներ:

Բազմաթիվ հետազոտողների՝ չաղտոտված և աղտոտված ջրերով ոռոգվող հողերում ծանր մետաղների ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ գետի ջրերով ոռոգվող ուժեղ աղտոտված հողերում, չաղտոտված հողերի համեմատությամբ *Mo*-ի քանակը բարձր է 5,5 անգամ, *Ni*-ը՝ 20, *Mn*-ը՝ 1,5, *Cu*-ը՝ 2,7 անգամ: Այսինքն՝ դրանք գերազանցում են ՍԹԽ շեմը:

Ուսումնասիրվել է նաև Ալավերդու լեռնամետալուրգիական գործարանի արտանետումների ազդեցությունը մշակաբույսերի և բնական խոտհարքների բերքատվության վրա: Աղտոտման աղբյուրից 5 կմ հեռավորությամբ աշխարհային ցորենի բերքատվությունը ստուգիչի նկատմամբ նվազել է 70, գարնանացան գարունը՝ 5,0, խոտախառնուրդի չոր զանգվածը՝ 16,0, եգիպտացորենի կանաչ զանգվածը՝ 74,0, բնական խոտհարքների և առվույտի չոր խոտի զանգվածը համապատասխանաբար՝ 3,0 և 11,60 գ/հա կամ 21,9, 22,73, 30,77, 23,87, 15,79 և 29,44 %: Աղտոտման աղբյուրից 10 կմ հեռավորությամբ աշխարհային ցորենի բերքատվությունը ստուգիչի նկատմամբ նվազել է 12,50 %, գարնանացան գարունը՝ 18,18 %, խոտախառնուրդի չոր զանգվածը՝ 23,8 %, եգիպտացորենի կանաչ զանգվածը՝ 19,35 %, բնական խոտհարքների և առվույտի չոր խոտի զանգվածը՝ համապատասխանաբար 10,58 և 12,9 %-ով (Հայրապետյան, Շիրինյան, 2003, Унанян, 2012, Bystrianský, et al., 2023, Унанян и др., 2020):

Աղյուսակ 2. Մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը*

Ցուցանիշներ	Դասեր					միավոր
	1-ին (գերազանց)	2-րդ (լավ)	3-րդ (միջին)	4-րդ (անբավարար)	5-րդ (վատ)	
<i>Zn</i>	ՖԿ	100	200	500	>500	մկգ/լ
<i>Cu</i>	ՖԿ	ՖԿ+20	50	100	>100	մկգ/լ
<i>Pb</i>	ՖԿ	ՖԿ+10	25	50	>50	մկգ/լ
Նիտրատ իոն	1 կամ ՖԿ	2,5	5,6	11,3	>11,3	մգN/լ

*ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի N75-Ն որոշում:

ՀՀ տարբեր տարածաշրջաններում, աղտոտման օբյեկտով պայմանավորված, ոչ բոլոր աղտոտիչներն են միատեղ հանդես գալիս: Ծանր մետաղների պարունակությունը պայմանավորված է նաև տվյալ տարածքում հողառաջաց- նող ապարների տեսակով, հանքայնությամբ, տվյալ մետաղի պարունակությամբ, տարածքի ռելիեֆով, կլիմայով և այլ գործոններով:

Հայաստանի բնական ջրերում *pH*-ը սովորաբար տա- տանվում է 6,5-7,5-ի սահմանում: Ջրում տեղի ունեցող քիմիական և կենսաքիմիական պրոցեսներն առաջաց- նում են *pH* ռեակցիայի (թթվայնության և հիմնայնության) նկատելի փոփոխություններ, ինչն էապես ազդում է բույ- սերի և կենդանի օրգանիզմների կենսունակության վրա (Հայրապետյան, Շիրիսյան, 2003, Հարությունյան, 2010):

Ռոտզման ջրի որակը պայմանավորված է ոչ միայն լուծ- ված աղերի քանակությամբ, այլև դրանց քիմիական կազ- մով: Ջրում և հողում հիմնականում կուտակվում են Ca^{2+} , Mg^{2+} , Na^{+} , ինչպես նաև CO_3^{2-} , HCO_3^{-} , Cl^{-} , SO_4^{2-} իոնները: Ընդ որում՝ դրանցից առաջացած աղերը տարբեր ազդե- ցություն են գործում հողի ֆիզիկական և քիմիական հատ- կությունների ու բույսերի սննդառության վրա: Այսպես՝ լուծ- ված է, որ հողի և բույսերի համար առավել վնասակար է սոդան (Na_2CO_3): Վերջինիս 0,001 % պարունակության դեպքում կտրուկ թուլանում է հողի ջրաթափանցելիությու- նը, չորանալիս հողն ամրանում և կեղևակալում է, դժվար է վարվում, ինչն էլ բացասաբար է ներգործում բույսերի սննդառության վրա: Հողում քլորի սահմանային թույլ- լատրելի քանակությունը կազմում է 0,01 %: Ուստի ռոտզ- ման ջրի որակը գնահատելիս կարևոր է հաշվի առնել ոչ միայն ռոտզման ջրում լուծված աղերի պարունակությու- նը, դրանց կազմը և ռեակցիան (*pH*), այլև գլխավոր իոն- ների հարաբերակցությունը (Եղիազարյան և ուրիշ., 2014, Ягодин и др., 1989): Դրա համար որոշվում է, այսպես կոչ- ված, ռոտզման ջրի պիտանելիությունը (իռիգացիոն կամ Ստեբլերի հիմնայնության գործակիցը՝ *KC*): Ընդունված է այն գնահատել ըստ հետևյալ երեք պայմանների.

1. Երբ լուծույթում Na^{+} իոններն ավելի պակաս են, քան Cl^{-} իոնները.

$$K_1 = \frac{288}{5 \cdot Cl^{-}}:$$

2. Երբ լուծույթում Na^{+} իոններն ավելի պակաս են ուժեղ

թթուների իոնների գումարից, միաժամանակ լուծույթում առկա են սուլֆատներ՝

$$K_1 = \frac{288}{Na^{+} + 4 \cdot Cl^{-}}:$$

3. Երբ լուծույթում Na^{+} իոնների թիվը ավելի մեծ է ուժեղ թթուների իոնների գումարից, լուծույթում առկա են սուլ- ֆատներ, քլորիդներ և կարբոնատներ՝

$$K_1 = \frac{288}{10Na^{+} - 5 \cdot Cl^{-} - 9SO_4^{2-}}:$$

Ռոտզման ջրի որակական գնահատման կարևոր բնութա- գիր է նաև Na^{+} իոնների պոտենցիալ կլանման ցուցանիշը (SODIUM ADSORPTION RATIO (SAR)), որը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$SAR = \frac{Na^{+}}{\sqrt{\frac{Ca^{2+} + Mg^{2+}}{2}}}$$

Մագնեզիում (Mg^{2+}) իոնների վտանգավորության աստի- ճանը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$K_{Mg} = \frac{Mg^{2+}}{Ca^{2+} + Mg^{2+}} \cdot 100:$$

Արդյունքները և վերլուծությունը

Տավուշի ջրամբարի աղտոտման հիմնական աղբյուրներն են Բերդ քաղաքից և զինվորական զորամասից դուրս եկող չմաքրված կոմունալ-կենցաղային հոսքաջրերը, գյու- ղատնտեսությունում կիրառվող հանքային պարարտա- նյութերի և թունաքիմիկատների մնացորդները, Տավուշի տեքստիլ գործարանի, հանքարդյունաբերության թափոն- ները և այլն:

Անալիզների արդյունքներով պարզվել է, որ Տավուշի ջրամ- բարի ջրերում առկա են զգալի թվով իոններ, այդ թվում՝ ծանր մետաղներ, որոնց քանակական հարաբերակցու- յունն ազդում է ջրի էկոլոգիական վիճակի, ինչպես նաև ռոտզման նպատակով օգտագործվող ջրերի որակական ցուցանիշների վրա (աղ. 3):

Աղյուսակ 3. Ջրալուծ աղերի (իոնների) պարունակությունը (համարիչում՝ մգ/լ, հայտարարում՝ մգ/էկվ)*

Ուսումնասի- րության օբյեկտ	<i>pH</i>	Լուծված աղերի պարունա- կությունը, %	Այդ թվում											
			Ca^{2+}	Mg^{2+}	K^{+}	Na^{+}	<i>Pb</i>	<i>Zn</i>	<i>Cu</i>	CO_3^{2-}	HCO_3^{-}	<i>Cl</i>	SO_4^{2-}	NO_3^{-}
Տավուշի ջրամբար	7,8	0,056-0,060	$\frac{80.4}{4.02}$	$\frac{81.3}{6.77}$	$\frac{15.2}{0.39}$	$\frac{114.8}{4.99}$	$\frac{0.028}{0.270}$	$\frac{0.814}{0.025}$	$\frac{0.094}{0.026}$	չկա	$\frac{402.1}{6.59}$	$\frac{205.5}{5.79}$	$\frac{4.42}{4.42}$	$\frac{11.4}{0.184}$

*Կազմվել է հեղինակների կողմից:

Հայաստանում մշակվող մշակաբույսերի համար ջրի *pH*-ը 7,8 է, իսկ հողի *pH*-ի հետագա բարձրացում թույլ չտալու համար նպատակահարմար է, որ չօգտագործվեն բարձր հիմնային ռեակցիայով պարարտանյութեր: Լուծված աղերի պարունակությունը, անալիզների կատարման ժամկետով պայմանավորված, տատանվում է 0,056-0,06 % սահմանում և գտնվում է ոռոգման ջրերի համար նախատեսված թույլատրելի սահմանում: Առավել բարձր է Ca^{2+} , Mg^{2+} , Na^{2+} , HCO_3^- , Cl^- , SO_4^{2-} իոնների պարունակությունը: Նկատի ունենալով, որ այդ իոններից Ca^{2+} , Mg^{2+} , Na^{2+} և Cl^- -ի քանակական հարաբերություններն առավել ազդեցություն են գործում հողի հատկությունների և բույսերի կենսունակության վրա, մեր կողմից որոշվել է դրանց քանակական հարաբերությունն ըստ Ստեբլերի բանաձևի: Ընդ որում հիմք է ընդունվել ոռոգման ջրի իռիգացիոն գործակիցը:

1. Երբ Na^+ իոններն ավելի պակաս են Cl^- իոններից՝

$$K_1 = \frac{288}{5 \cdot Cl} = \frac{288}{5 \cdot 5,79} = 9,95:$$

2. Երբ լուծույթում Na^+ իոնների պարունակությունն ավելի բարձր է, քան Cl^- իոններինը, սակայն Na^+ իոնների թիվը ավելի փոքր է ուժեղ թթուների գումարից, միաժամանակ լուծույթում առկա են սուլֆատներ՝

$$= \frac{288}{Na + 4 \cdot Cl} = \frac{288}{4,99 + 4 \cdot 5,79} = 10,2:$$

Անալիզների արդյունքները փաստում են, որ իռիգացիոն գործակիցները տատանվում են այնպիսի մեծության սահմանում, ըստ որի կարգաբանական որակի՝ ոռոգման ջրի պիտանիությունը բավարար է (Եղիազարյան և ուրիշ., 2014):

Ոռոգման ջրի որակական գնահատման կարևոր բնութագիր է նաև Na^+ իոնի պոտենցիալ կլանման ցուցանիշը (SODIUM ADSORPTION RATIO (SAR)), որի մեծությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$SAR = \frac{Na^+}{\sqrt{\frac{Ca^{2+} + Mg^{2+}}{2}}} = \frac{5}{\sqrt{\frac{4 + 6,8}{2}}} = 2,2:$$

Համաձայն *SAR*-ի մեծության՝ Տավուշի ջրամբարի ջրերը ոռոգման համար պիտանի են:

Հայտնի է, որ հողերի ֆիզիկաքիմիական հատկությունների ձևավորման գործում կարևորվում է նաև Ca^{2+}/Mg^{2+} հարաբերակցությունը: Հավելենք, որ Հայաստանում աղուտ-ալկալի հողերն առաջացել են նաև մագնեզիումի ավելցուկից՝ կալցիումի համեմատությամբ: Mg^{2+} իոնի վտանգավորության աստիճանն է՝

$$K_{Mg} = \frac{Mg^{2+}}{Ca^{2+} + Mg^{2+}} \cdot 100 = \frac{6,8}{4 + 6,8} \cdot 100 = 63 \quad \%:$$

Ստացված տվյալների համաձայն՝ K_{Mg} գործակիցը 50 %-ից բարձր է. այս դեպքում Mg^{2+} -ը որոշակի վտանգ է ներկայացնում հողի համար:

Ջրամբարի ջրերում CO_3^{2-} իոններ չեն հայտնաբերվել (աղ. 4):

Աղյուսակ 4. Տավուշի ջրամբարի ջրերում լուծված աղերի, CO_3^{2-} իոնների պարունակությունը և *pH*-ը*

Ցուցանիշներ	Պարունակությունը ջրում
Լուծված աղեր	0,056-0,06 %
<i>pH</i>	7,8
CO_3^{2-}	-

*Կազմվել է հեղինակների կողմից:

Ուսումնասիրվել է նաև ոռոգման ջրի տևական ազդեցությունը հողի ագրոքիմիական ցուցանիշների վրա: Ըստ աղյուսակ 5-ի՝ հողի մեխանիկական կազմը ծանր կավավազային է, *pH*-ը բնորոշ է Հայաստանի այդ գոտու անտառային դարչնագույն հողերին, ջրալույծ աղերի պարունակությունը թույլատրելի սահմանում է, ջրաթափանցելիությունը թույլ է, ինչը պայմանավորված է կլանող կոմպլեքսում Mg^{2+} և Na^+ իոնների զգալի քանակությամբ:

Գնահատվել է նաև ջրերի Էկոլոգիական վիճակն ըստ ծանր մետաղների պարունակության: Միաժամանակ ուսումնասիրվել է նիտրատների պարունակությունը: Պարզվել է, որ մարտ և հունիս ամիսներին Տավուշի ջրամբարում պղնձի պարունակությունը համապատասխանաբար կազմել է 0,085 և 0,094 մգ/լ, ցինկինը՝ 0,801 և 0,814 մգ/լ, կապարինը՝ 0,03 և 0,05 մգ/լ: ՖևՕ-ի կողմից ընդունված նորմատիվների համաձայն՝ պղնձի, ցինկի և կապարի պարունակությունները ՍԹԽ սահմաններում են:

Ըստ ՀՀ մակերևութային ջրերի Էկոլոգիական նորմերը սահմանող ՀՀ կառավարության 2011 թ. հունվարի 27-ի N 75-Ն որոշման՝ պղնձի և կապարի պարունակություններն ընդհանուր առմամբ գնահատվում են «անբավարար» (4-րդ դաս), ցինկինը՝ «վատ» (5-րդ դաս):

Քանի որ նիտրատների պարունակությունը կազմել է 9,5 և 11,4 մգ/լ, ուստի նիտրատ իոնի պարունակությունը մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), իսկ հունիսին՝ «վատ» (5-րդ դաս): Կարելի է եզրակացնել, որ Տավուշի ջրամբարում պղնձի և կապարի քանակությունները դեռևս մեծ վտանգ չեն ներկայացնում, իսկ հունիս ամսին ցինկի և նիտրատների քանակությունները մտահոգության տեղիք են տալիս (աղ. 6):

Աղյուսակ 5. Տավուշի ջրամբարի ջրերով ոռոգվող հողի ագրոքիմիական բնութագիրը (համարիչում մգ/էկվ, հայտարարում %)*

Հողատիպը	Մեխանիկական կազմը	pH	Զրալույծ աղերը, %	Զրաթափանցելիությունը, մմ/ ժամ	Հողի կլանման ունակությունը, մգ/էկվ 100 գ հողում	Այդ թվում՝		
						Ca ²⁺	Mg ²⁺	Na ⁺
Անտառային դարչնագույն	Կավավազային, ծանր ֆիզիկական կազմը՝ 54,1 %	7,9	0,059	79	37,9	16,7 44,1	12,4 32,7	8,5 22,4

Աղյուսակ 6. Տավուշի ջրամբարի ջրերի էկոլոգիական նորմերը*

Ուսումնասիրության օբյեկտ	Ցուցանիշներ	Ջրի որակի դաս
Տավուշի ջրամբար	Պղինձ (Cu)	Անբավարար (4-րդ)
	Ցինկ (Zn)	Վատ (5-րդ)
	Կապար (Pb)	Անբավարար (4-րդ)
	Նիտրատներ	Վատ (5-րդ)

*Կազմվել է հեղինակների կողմից:

Տավուշի ջրամբարի աղտոտվածությունը խնդիր է տարածաշրջանի համար, քանի որ այն տարածաշրջանի հինգ բնակավայրերի ոռոգման հիմնական աղբյուրն է: Իսկ «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման (այսուհետ՝ «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրային մարմինների կարգավիճակների ջրի որակի նորմերը սահմանելու մասին») ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի N 1056-Ն որոշման) մեջ նշված է, որ 5-րդ կարգի՝ «վատ» դասի ջրերը չի կարելի օգտագործել ոռոգման նպատակով (www.arlis.am): Ծանր մետաղներով աղտոտված ջրերով ոռոգումն առաջացնում է տեղային աղտոտում, որը հանգեցնում է հողի աղտոտման, մշակաբույսերի բերքատվության անկման և էկոլոգիապես ոչ անվտանգ սննդամթերքի արտադրության (Հայրապետյան, Շիրինյան, 2003, Հարությունյան, 2018):

Եզրակացություն

Տավուշի ջրամբարի ջրերի էկոլոգիական վիճակի և այդ ջրերով տնական ժամանակ ոռոգված հողերի ագրոքիմիական և ագրոքիմիական հատկությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ՝

- Na⁺ և Cl⁻ իոնների պարունակությամբ որոշվող ջրի իռիգացիոն գործակցի մեծության համաձայն՝ Տավուշի ջրամբարի ջրերը ոռոգման տեսանկյունից բավարարողակի են,
- Ca²⁺, Mg²⁺, Na²⁺ հարաբերակցությամբ որոշվող Na⁺ իոնների պոտենցիալ կլանման ցուցանիշը (SAR) կազմում է 2,2, ինչը ոռոգման համար դրական ցուցանիշ է,
- Mg²⁺, Ca²⁺ հարաբերակցությամբ որոշվող Mg²⁺ իոնների պարունակության վտանգավորության աստիճանը կազմում է 63 %, ուստի նման դեպքում ոռոգման ջուրը որոշակի վտանգ է ներկայացնում հողի համար,
- ջրի pH-ը թույլ հիմնային է (pH=7,8), ինչը պայմանավորված է Ca, Mg և K իոնների առկայությամբ, սակայն վերջիններիս քանակը չի գերազանցում թույլատրելի սահմանները,
- ջրամբարի ջրերը CO₃²⁻ իոններ չեն պարունակում,
- մարտ և հունիս ամիսներին ջրամբարում պղնձի պարունակությունը համապատասխանաբար կազմել է 0,085 և 0,094 մգ/լ, ցինկինը՝ 0,801 և 0,814 մգ/լ, կապարինը՝ 0,03 և 0,05 մգ/լ: Էկոլոգիական նորմերի համաձայն՝ պղնձի և կապարի պարունակությունն ընդհանուր առմամբ գնահատվում է «անբավարար» (4-րդ դաս), ցինկինը և նիտրատներինը՝ «վատ» (5-րդ դաս):

